Նախագիծ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Լրամշակված տարբերակ

Կ-364[2]-06.09.2018-ՊԻՄԻ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 40.3-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ ընտրություններին առաջադրվելու համար «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված ընտրական գրավի մեկ քառորդի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 40.6-րդ հոդվածում «գրանցամատյանը» բառից հետո լրացնել «սահմանված կարգով» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 40.10-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 40.15-րդ հոդվածով.

«Հոդված 40.15. Տեղամասային կենտրոնում գտնվելու կանոնները խախտելը

1.Քվեարկության նախապատրաստման, քվեարկության եւ քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ տեղամասային կենտրոնում կամ քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձի կողմից տեղամասային կենտրոն պարբերաբար մտնելը (եթե գործողությունը շարունակվել է բանավոր նախազգուշացումից հետո) կամ տեղամասային կենտրոնում ապօրինի գտնվելը (եթե գործողությունը շարունակվել է տեղամասային կենտրոնը լքելու բանավոր պահանջի ներկայացումից հետո)՝
առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:

2. Քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձի կողմից օրենքով սահմանված կարգով իր վկայականը դիտավորությամբ տեսանելի ձեւով չկրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 223-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա. 1-ին կետից «401-404, 40.6-40.14» թվերը հանել,

բ. լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

«6) սույն օրենսգրքի 401 -404 եւ 40.6 - 40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական մարմինների (պաշտոնատար անձանց) կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերի հայցադիմումով:»:

Հոդված 7. Օրենսգրքի 254-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետում «40.13, 40.14,» թվերը փոխարինել «40.13 - 40.15» թվերով,

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ պարբերություն.

«Սույն օրենսգրքի 401 -404 եւ 40.6 -40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները, թեկնածուները կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ինչպես նաեւ հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերը հայցադիմում են ներկայացնում անկախ իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից համապատասխան արձանագրություն կազմած լինելու կամ չլինելու հանգամանքից:»:

Հոդված 8. Օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասում «40.13 եւ 40.14» թվերը փոխարինել «40.13-40.15» թվերով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-364-03.09.2018-ՊԻՄԻ-011/0 և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կ-364[2]-03.09.2018-ՊԻՄԻ-011/0 օրենքների նախագծում կատարված փոփոխությունների և լրացումների

Նախագիծ

Կ-364[2]-03.09.2018-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 40.3-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ ընտրություններին առաջադրվելու համար «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված ընտրական գրավի մեկ քառորդի չափով, բայց ոչ պակաս, քան նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 40.6-րդ հոդվածում «գրանցամատյանը» բառից հետո լրացնել «սահմանված կարգով» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 40.10-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 40.15-րդ հոդվածով.

«Հոդված 40.15. Տեղամասային կենտրոնում գտնվելու կանոնները խախտելը

1.Քվեարկության նախապատրաստման, քվեարկության եւ քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ տեղամասային կենտրոնում կամ քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձի կողմից տեղամասային կենտրոն պարբերաբար մտնելը (եթե գործողությունը շարունակվել է բանավոր նախազգուշացումից հետո) կամ տեղամասային կենտրոնում ապօրինի գտնվելը (եթե գործողությունը շարունակվել է տեղամասային կենտրոնը լքելու բանավոր պահանջի ներկայացումից հետո)՝

Deleted: Հոդված 3. Օրենսգրքի 40.7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունում «հեռուստառադիոընկերությամբ (հեռուստաընկերությամբ կամ ռադիոընկերությամբ)» բառերից հետո լրացնել «կամ կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին), թեկնածուներին կամ հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերին վճարովի եթերաժամանակ տրամադրող այլ լրատվամիջոցներով» բառերը:¶

Deleted: 4

Deleted: 5

առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:
2. Քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձի կողմից օրենքով սահմանված կարգով իր վկայականը դիտավորությամբ տեսանելի ձեւով չկրելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 223-րդ հոդվածում՝
1) 1-ին մասի՝
ա. 1-ին կետից «401-404, 40.6-40.14» թվերը հանել,
բ. լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ կետ.
«6) սույն օրենսգրքի 401 -404 եւ 40.6 - 40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական մարմինների (պաշտոնատար անձանց) կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերի հայցադիմումով:»:

Հոդված 7. Օրենսգրքի 254-րդ հոդվածում՝
1) 1-ին մասի 1-ին կետում «40.13, 40.14,» թվերը փոխարինել «40.13 - 40.15» թվերով,
2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ պարբերություն.
«Սույն օրենսգրքի 401 -404 եւ 40.6 -40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները, թեկնածուները կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ինչպես նաեւ հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերը հայցադիմում են ներկայացնում անկախ իրավասու ընտրական հանձնաժողովի կողմից համապատասխան արձանագրություն կազմած լինելու կամ չլինելու հանգամանքից:»:

Հոդված 8. Օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասում «40.13 եւ 40.14» թվերը փոխարինել «40.13-40.15» թվերով:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-364-03.09.2018-ՊԻՄԻ-011/0), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-364[1]-03.09.2018-ՊԻՄԻ-011/0), «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-364[2]-03.09.2018-ՊԻՄԻ-011/0) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-364[3]-03.09.2018-ՊԻՄԻ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակ (հիմնական զեկուցող) եզրակացություն	
1.	ՀՀ կառավարություն	ՀՀ քրեական օրենսգրքի 154-րդ հոդված	Առաջարկվում է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում՝ 1. «կամ տրված խոստումի հիման վրա» բառերը հանել, 2. «փաստաթղթի» բառից հետո լրացնել «լուսանկարահանմամբ կամ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության» բառերը:	Նախագիծը լրամշակ է	
2.	ՀՀ կառավարություն	ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդված	Առաջարկվում է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով փոփոխվող 154.2-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասում՝ «առավելություն ստանալը, պահանջելը կամ կաշառքի առաջարկը կամ խոստումն ընդունելը» բառերը փոխարինել «առավելություն ստանալը կամ պահանջելը» բառերով: 2) 2-րդ մասի 2-րդ պարբերությունում «երեքհազարապատիկից չորսհազարապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհազարհինգհարյուրապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով» բառերով:	Նախագիծը լրամշակ է	
3.	ՀՀ կառավարություն	ՀՀ վարչական իրավախախտումն	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում	Նախագիծը լրամշակ է	

		երի վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերություն	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածը հանել նախագծից		
4.	**ՀՀ կառավարություն**	ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 40.15-րդ հոդվածի 2-րդ մասում «վկայականը» բառից հետո լրացնել «դիտավորությամբ» բառը:	Նախագիծը լրամշակ է	